

ներ և մի քանի մեծ հաստատութիւններ և ընկերութիւններ միանան և հաւաքական ոյժերով հիմնեն մի սահմանափակ 100 հոգու համար յայտնի պայմաններով:

Դժբախտաբար մեր քաղաքական ինքնավարութիւններէց հազիւ թէ կարելի լինի այդպիսի քայլեր սպասել, քանի որ նոյնիսկ մեր ամենամեծ քաղաքները (Թիֆլիսը, Բագուէն) իրանց սովորական հիւանդներին անդամ չեն կարողանում բաւարարութիւն տալ: Պէտք է յորդորել, որ հասարակութեան ունեւոր դասակարգը առատ նուիրատուութիւններով իրագործելի դարձնէ այդ վերին աստիճանի անհրաժեշտ ձեռնարկութիւնները:

ԲՃ. Գ. ՍԱՐԳ.

ՍՏԱՄԲՈՒՔՄԻ ԿՆՏԱՐԸ (ստամբուլի մի քանի հիւանդութիւնները), կազմեց բժ. Վ. Օրթոքսզի. մէկ պատկերով Պետերբուրգ. 1903 թ. գինն է 20 կոպ.

Այդ գրքոյկը ներկայացնում է բժ. Ա. Բուդուղեանի հրատարակութիւնների № 25: Նա կազմուած է հմուտ ձեռքով և ընթերցողին անխորժի վաղափար է տալիս թէ ստամբուլի ֆիզիոլոգիական դործունէութեան և թէ կատարի հիւանդութեան մասին, համեմատելով նրա հետ հեշտութեամբ չփոթւող քաւաստամբուլի մի քանի ուրիշ հիւանդութիւնները:

Գրքոյկին կցուած է մի պատկեր, որը ներկայացնում է ստամբուլ, աղիքները, լեարգը և այլն:

Թարգմանութիւնը կատարուած է աջող: Գրքին կցած է բժ. Բուդուղեանի յոռաջաբանը, որի մէջ բարի ցանկութիւն է յայտնուած, որ Թիֆլիսի, Բագուի և ուրիշ քաղաքային վարչութիւններ և հիմնարկութիւններ բանան նորմալ ճաշարաններ, որտեղ աղքատ դասակարգը կարողանար ստանալ լաւ անուշագ. նա նոյնպէս փափագ է յայտնում, որ մեղանում, ինչպէս Պետերբուրգում, հիմք դնուի այնպիսի մի հիմնարկութեան, որտեղից կարելի լինի ստանալ երեխաների համար մաքուր և լաւ կաթ:

ԲՃ. Գ. ՍԱՐԳ.

ՏՐԱՆՍԻԼ (վարակիչ աչքացաւ), փոխադրեց բժ. Ն. Տէր-Դասալեան, 1902 թ. Ալէքսանդրոպոլ, գինն է 3 կոպ.:

Մեղանում բժշկական գիտութիւնը ժողովրդականացնող գրականութիւնը աւելի բախտաւոր է, քան միւս մասնագիտու-

թիւնների վերաբերեալ գրականութիւնը: Ոչ մի մասնագիտութեամբ այնքան գրքեր չեն հրատարակուել մեզ մօտ, որքան բժշկութեան վերաբերեալ:

Մինչև այժմ մենք ունէինք բժշկական-առողջապահական գիտելիքները ժողովրդականացնող երկու բժիշկներ—Ա. Բուդուզեան և Վ. Արծրունի. այժմ ասպարէզ է գալիս բժ. Ն. Տէր-Խահակեանը իր արդէն № 3 հրատարակութիւնով: Առաջին և երկրորդ գրքայինները վերաբերում են ժանտախտին և գիֆտերիաին, իսկ վերջինը, «Տրախոմա» վերնագրով գրքովը՝ մեր երկրում շատ տարածուած աչքացաւին: Նա պարզ լեզուով բացատրում է ընթերցողին, թէ «ինչպէս պէտք է մարդիկ պաշտպանեն իրանց աչքերն այդ հիւանդութիւնից և չը վարակեն ուրիշներին»:

Բժ. Գ. ՍԱՐԳ.

Ն Ո Ր Ս Տ Ա Յ Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) Լ.—Ման, «Օտարութեան մէջ», Թիֆլիս, 1903 թ., գինն է 15 կոպէկ:
- 2) Ա. Հախվերդեան, «Վշտահար սրտից», բանաստեղծութիւններ, Թիֆլիս, 1902 թ., գինն է 20 կոպէկ:
- 3) Զէյթունցի, «Զէյթունի անցեալէն և ներկայէն», Բ. մասն, Բարիզ, 1903 թ., գինն է 1 րուբլի:
- 4) Բժ. Ա. Բուդուզեան, «Քուն և երազ», մէկ պատկերով, Ս. Պետերբուրգ, 1903 թ., գինն է 25 կոպէկ:
- 5) Յով. Թադէոսեան, «Քուչուկ Նահապետի երգերը», Թիֆլիս, 1903 թ., գինն է 15 կոպէկ:
- 6) Ed. Bernstein, «Die Leiden des armenischen Volkes und die Pflichten Europas,» Berlin, 1902:
- 7) A. Vandal, «Les armeniens et la réformation de la Turquie,» Genève, 1903:
- 8) Georg Brandes, «Armenien und Europa,» Genf, 1903:
- 9) Francis de Pressencé, «L'Arménie et la Macédoine.»
- 10) Հ. Գ. Վ. Մէնէվիչեան, Արդի լեզուագիտութիւնը, հատոր ա., Վիեննա, 1903 թ., գինն է 3 ֆր.:
- 11) Ե. Բ. Ալիսագեան, Ինքնուսուցիչ Հայերէն և Վրացերէն լեզուի, Թիֆլիս, 1903 թ., գինն է 20 կոպ.: